Հարցաշար հայոց լեզվի օլիմպիադայի հանրապետական փուլի
12-րդ դասարան

Տևողությունը՝ 180 րոպե

Ողջ գիշեր կանթեղը վառ մնաց բազմաշնորհ այրը Գրիգոր Մագիստրոսը մեծահռչակ հայը, մագաղաթին էր հանձնում իր մտքերը **թրծելով** դրանք հոգու հնոցում:

Ազգ իմ աչք իմ այսպես սկսեց իր ուղերձը ավելի ճիշտ պատգամը ապրեցի ներհակության խառնակ **ամեն ինչ** ավերող դարաշրջանում ականատեսը եղա հայոց թագավորության կործանման ու **Անին** տիեզերքի **աչքը** օտարի նստավայր **դարձավ**: Տեսա հայի **Աստծուց** շնորհված ոգին արարող ինչպիսի բարձունքի հասավ կերտելով փառահեղ տաճարներ և աննման գոհարներ երկնեց: Մեր արքաները **ողջամիտ** կառավարեին տերությունը չէր տապալվի: Փորձեցի **մեջքս դեմ տալ** մնացի սակայն փլվածքի տակ:

Տիրոջ **կամքով** արարեցի հեղուկ **որ** ի զորու է առույգ **պահելու** մարդուն երկու հարյուրամյակ: Այդ մասին չեն իմանա իմ ժամանակակիցները երկար կյանքի արժանի չեն հղփացել են նրանք ապրում են մեղկ անժույժ բարքով: Համոզված եմ թուրմի գաղտնիքը կծախեն օտարին ինչպես հայրենադավը շքեղաշուք Անին: Ծածկագիրը պահ տվի Տարոնի լույսից զուրկ քարայրերից **մեկին** ու այն կտակում եմ հայոց ազգանվեր սերունդներին:

Կգան ժամանակներ և ձերբազատվելով **ամբարշտությունից** կյանք պարգևող հյութը կբաշխվի մաքրագործված ժողովուրդներին ու ամենքը կիմանան հրաշագործ հեղուկի հայրենիքը **Հայաստանն** է: Այդժամ հայոց հողի վրա կհնչեն հայերեն խոսքն ու հայերեն հրովարտակը և հայապատկան գանձերը էլ չեն կողոպտվի օտարաշուրթ **տիրակալներից**:

Գրիչը ցած ընկավ նրա ընդարմացող ձեռքից: Մոմի լույսը հանգավ:

Սա մեծահանճար հայի վերջին թուղթն էր:

1. Կետադրի՛ր համր բնագիրը: (4 միավոր)
2. Գրի՛ր բնագրում թավ գրված բառերի շարահյուսական պաշտոնները: (3 միավոր)
3. Գրի՛ր *սակայն, որ, ինչպես, էլ* բառերի (ըստ բնագրում կիրառված գործածության) խոսքիմասային պատկանելությունը, տեսակը: Կազմի՛ր նախադասություններ նրանց այլ խոսքիմասային արժեքներով: (2 միավոր)
4. Գրի՛ր *գրգամոլ, քուրձ, կուպր, զերդ, չամչարակ, քարվանսարա, ի տրիտուր, վին, անթեղել, ամիճ* բառերի մեկական հոմանիշ կամ բացատրի՛ր բառակապակցությամբ: (1 միավոր)
5. Առանձնացրո՛ւ սխալ գրված բառաձևերը. նշի՛ր ճիշտը. *մի՛ խոսեք, իմ դուստրի կամոք, ի դեմս ձեզ, երկպառակտություն, ի հակակշիռ Արևելքին, խոնավացնել, նախատեսնված, խոսացած, վիճարկվել, հեռատեսի ակնոցներ հագնել, ի թիվ այլոց, մթնացնել, կարդացնել, ըստ կարելվույն, դեմ դիմացով, խնդիրն այն է, որ.. :* (1 միավոր)
6. Կազմի՛ր 15 բառ *լի, կյանք, տալ* բառերի արմատական բոլոր ձևերով: (3 միավոր)
7. Գրի՛ր հինգ դարձվածք *գլուխ* բառի տարբեր հոլովաձևերով և մեկնաբանի՛ր: (1 միավոր)
8. Գրի՛ր շարադրություն «Անձրևից հետո» վերնագրով (երկու էջի սահմաններում): (5 միավոր)